

**THE HOWARD KARAGHEUSIAN COMMEMORATIVE CORPORATION**

**75 YEARS  
OF  
SERVICE**

**NEW YORK  
1996**



**MIHRAN KARAGHEUSIAN**  
Founder and President (1921–1933)



**LEILA KARAGHEUSIAN**  
Founder and President (since 1933)

BOARD OF DIRECTORS

**1996**

Miss Leila Karagheusian, *President*  
Dr. Pergrouhi Svajian, *Vice President*  
Harry A. Dorian, Esq., *Secretary/Treasurer*  
Miss Irma der Stepanian  
Dr. Vartan Ghugasian  
Mr. Michael Haratunian  
Mr. Edward Janjigian  
Dr. Louis M. Najarian  
Mr. Richard J. Varadian  
Dr. Bedros Yavru-Sakuk  
Dr. Rita Zorian

Dr. Walter Bandazian, *Executive Director*

\* \* \*

**FROM 1921**

G. Everett Clitter  
Walter J. Corno  
Minot Crofoot  
Dr. Bayard Dodge  
Richard Dorian  
Carl Ehlermann  
Dr. Edgar Housepian  
Harold C. Jacquith  
Vartan Jinishian  
Zabelle Karagheusian  
Charles Karagheusian  
Arshag Karagheusian  
Mihran Karagheusian  
Serpouhi A. Karagheusian  
Adrian Massie  
Edward C. Miller  
William Montgomery  
Dr. Vazken Parsegian  
Alan Philibosian  
George A. Rowell  
Steele L. Winterer





***Members of the Board of Directors—1996***

***Seated—left to right: Mr. Richard J. Varadian, Dr. Vartan Ghugasian, Dr. Pergrouhi Svajian,  
Miss Leila Karagheusian, Harry A. Dorian, Esq.***

***Standing—left to right: Miss Irma der Stepanian, Dr. Bedros Yavru-Sakuk,  
Dr. Louis M. Najarian, Dr. Rita Zorian, Mr. Michael Haratunian, Dr. Walter C. Bandazian.***

***Missing from the photo: Mr. Edward Janjigian.***

## FOREWORD

**T**he seventy-fifth anniversary of the Howard Karagheusian Commemorative Corporation offers the opportunity to present to our people a review of its social, medical, and educational services in the Middle East, Europe, and Armenia.

The picture of its vast field of service is given in this booklet through its history, narrated briefly by the Foundation's Directors, and as exemplified by the statistics of one year (1995). What is less tangible, yet more significant, is its mode of operation and its spirit.

The Karagheusian family has been the epitome of quiet and non-publicity seeking service. The establishment of the Foundation was a distinct expression of noble human kindness to turn a misfortune—the loss of an adolescent son—into goodness through service, such as the gathering of orphans and giving them a “Home.”

This noble legacy was firmly upheld in its formative years and thereafter by Mr. and Mrs. Noubar Tavitian in their direction of the Foundation's activities in different fields and in every country where the Foundation spread its service.

After Mr. and Mrs. Mihran Karagheusian, their daughter, Miss Leila Karagheusian undertook the chief responsibility in the nineteen thirties due to Mr. Karagheusian's business demands. She proved to be the embodiment of modest, quiet, sacrificing, and attentive efforts, always mindful of the needs of her people. She worked without discrimination, with highly demanding standards, which became the hallmark of her governing bodies and her staff. The centers of the Foundation became exemplary on an international level and served as centers for training in social work. They became models and recognized by governments as such.

Thus, in a short period of time, the Karagheusian Foundation widened its enterprise for orphans, establishing preventive and treatment centers for health and nutritional provisions for needy children. It established residences in Athens, Syria, and Lebanon; organized summer and evening classes in language, typing, home economics, dressmaking,

and art for children who had not been able to complete school. These courses yielded double benefits of employment and improvement of living standards of poverty stricken families. Dr. Karam Harfouche, Professor of Medicine at the American University of Beirut during the fifties wrote that the social life and health of the heavily populated lower class of Bourj Hamoud indicated a marked improvement in the quality of the life of the Armenians compared to their non-Armenian counterparts due to the services of the Karagheusian Foundation. Here it must be noted as an aside, that the Foundation has always welcomed and assisted needy non-Armenians as well as Armenians.

Today, Miss Leila Karagheusian, at an advanced age, derives a deep satisfaction from the Foundation's efforts in a new field of service. That new field is Armenia, where four dental clinics, in four different cities, including one in Artsakh, operate with state of the art equipment and with devoted and capable staff members providing needed dental care for 5-15 year old Armenian youngsters. The demand for care at the clinics is so great that it takes several months to obtain an appointment. The clinics are also utilized for in-service training of local dentists in Armenia.

Leila Karagheusian, with the grace of her more than nine decades of life, brings her attentive presence to the administrative work and meetings of the Foundation's governing bodies, inspiring alert, enthusiastic, and caring service, without publicity. It was in this vein that characteristically she did not accede to requests for public observances of the seventy-fifth anniversary of her Foundation.

We offer this booklet, on the occasion of the seventy-fifth anniversary of the Howard Karagheusian Commemorative Corporation, as a memorial to the Karagheusian Family and the Karagheusian Foundation, with sincere pride, pleasure and appreciation, and to provide the Armenian people with a glimpse of what they may expect from the Howard Karagheusian Commemorative Corporation in the decades ahead.

BOARD OF DIRECTORS  
HOWARD KARAGHEUSIAN  
COMMEMORATIVE CORPORATION

1996





ատըրոտ Գարակեօզեան Յիշատակի Հիմնարկին եօթանասունհինգամեակը բարեպատեն առիթը կ'ընծայէ մեր ժողովուրդին ներկայացնելու անոր ընկերային, առողջապահական և կրթական ծառայութիւնը Միջին Արևելքի, Երոպայի և Հայաստանի մէջ:

Իր ընդարձակ ծառայութեան պատկերը այս գրքոյկին մէջ կը պարզուի անոր անցեալի և ներկայի պատմականով՝ հակիրճ կերպով նկարագրուած Հիմնարկի տնօրէններուն կողմէ, իբր օրինակ ծառայող մէկ տարուան (1995) վիճակագրութեան մը յարակցութեամբ: Նուազ մատչելի և սակայն յոյժ կարևոր հանգամանքը՝ Հիմնարկին գործելու ձևն ու ոգին են:

Գարակեօզեան գերդաստանը բիրեղացումը եղած է լուռ ծառայութեան: Հիմնարկին հաստատումը խօսուն արտայայտութիւնն է մարդկային ազնի բարոյական տեսիլքին— դժբախտութիւն մը՝ պատանի զակի մը կորուստը, վերածել ծառայութեան բարիքի, հաւաքել որբեր ու անոնց տալ ՏՈՒՆ:

Այս վեհ ժառանգը ամուր պահուեցաւ Տէր և Տկն. Նուպար Դաիթեաններու տնօրէնութեամբ Հիմնարկի գործունէութեան զանազան մարզերուն մէջ և ամէն երկրի, ուր Հիմնարկը տարածեց իր բարիքը՝ իր կազմաւորման շրջանին թէ այնուհետև:

Տէր և Տկն. Միհրան Գարակեօզեաններէն ետք, երբ իրենց դուստրը՝ Օր. Լիլա Գարակեօզեան, ստանձնեց գլխաւոր պատասխանատուութիւն երեսունական թուականներուն, եղաւ մարմնացումը համեստ, լուռ, զոհաբեր ու բժախնդիր ջանքերու, միշտ ականջ դնելով իր ժողովուրդին կարիքներուն: Գործեց առանց խտրութեան, բժախնդի մակարդակով, որոնք կարգախօս դարձան իր վարչական գործակիցներուն և պաշտօնեաներուն համար: Հիմնարկին կեդրոնները դարձան օրինակելի՝ միջազգային չափանիշով, և ծառայեցին իբրև համալսարանական ուսանողներու վարժութեան կեդրոն՝ ընկերային ծառայութեան մարզին մէջ, պետութիւններու կողմէ ճանչցուելով իբրև տիպար կեդրոններ:

Այսպէս, կարճ ատենէն Գարակեօզեան Հիմնարկը ընդարձակած էր որբերու խնամատարութեան ձեռնարկը՝ հաստատելով կարիքաւոր երախաներու սննդական և առողջապահական արգելիչ և բուժիչ դարմանատուններ, կառուցելով բնակարաններ Աթէնք, Սուրիա և Լիբանան, կազմակերպելով ամառնային և իրիկնային դասընթացքներ դպրոցազուրկ կամ թերուս պատանիներու՝ լեզուի, մեքենագրութեան, առտնին տնտեսութեան, ձեռագործի,



գեղարուեստի մարզերուն մէջ: Այս դասընթացքներէն բխող զոյգ բարիքներ եղան՝ գործի առաջնորդել պատանհներ և բարելաւել ապրելակերպը աղքատիկ կամ համեստ ընտանիքներու, այնպէս մը որ յիսունական թուականներուն Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Բժշկական Բաժանմունքի դասախօս **Dr. Karam Harfouche** Պուրճ Համուտի հայահոծ աղքատիկ, շատ համեստ դասակարգին ընկերային կեանքին մասին կատարած ուսումնասիրութեան մէջ կը գրէր թէ հայ համայնքին կեանքի որակը զգալի բարելաւում կը յայտնաբերէ բաղդատմամբ ոչ-հայ դրացիներով՝ շնորհիւ Գարակէօզեան հիմնարկի ծառայութեան: Թէև Հիմնարկը ջանացած է ծառայել հայութեան, պէտք է յիշել որ իր դուռը բաց պահած է ոչ-հայ կարօտեալներու և՛ բնականաբար նուազ ծրագրեալ շեշտով:

Այսօր, Օր. Լիլա Գարակէօզեան, իր յտաջացեալ տարիքին, հոգեկան յաւելեալ գոհունակութիւն մը ունի ի տես Հիմնարկին ծառայութեան նոր դաշտին, որ Հայաստանն ու Արցախն են, և ուր չորս տարբեր քաղաքներու մէջ չորս դարամանատուններ կը գործեն նորագոյն տեսակի կազմածներով, նուիրեալ և ձեռնհաս պաշտօնէութեամբ, ծառայելու համար 5-15 տարու հայորդիներու ատամներու առողջութեան այնպիսի թափով մը, որ հարկ կ'ըլլայ 7-8 ամիս սպասել ժամադրութեան թուականին հասնելու համար: Դարմանատունները նաև կը ծառայեն իբրև ատամնաբոյժներու վերապատրաստումի կեդրոններ:

Լիլա Գարակէօզեան՝ իր ինը տասնամեակները գլոյ աճցնող շուքով՝ իր աչալուրջ ներկայութիւնը կը շարունակէ բերել վարչական գործին և վարչական ժողովներուն, ներշնչելով արթուն, աշխոյժ, բժախնդիի ծառայութիւն, մի՛շտ լոնելայն: Այսպէս է որ ան չընդհատաջեց որևէ հրապարակային ելոյթի՝ եօթանասունհինգամեակին առիթով:

Հետևաբար, այս գրքոյկը կ'ընծայուի իբրև յուշամատենան Գարակէօզեան Ընտանիքին և Գարակէօզեան Հիմնարկին՝ վերջինին եօթանասունհինգամեակին առիթով, և կը մատուցուի մեր ժողովուրդին՝ իբր նախերգանք գալիք տասնամեակներու գործունէութեան:

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ  
ՀԱՌԻԸՐՏ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ  
ՅԻՇԱՏԱԿԻ ՀԻՄՆԱՐԿԻ

1996



**ՀԱՌՒԸՐՏ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ  
ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ 75-ԱՄԵԱՅ ՈՒՂԻՆ**

Յիրաւի Մարդասիրութիւնն ու Բարեգործութիւնը սահմաններ չեն ճանաչում: Հայ ժողովուրդը շատ լաւ գիտէ նրանց էութիւնը և նաև մարդասիրական ու բարեգործական հաստատութիւնների արժեւորումը:

Դարասկզբին Երիտթուրքերի կազմակերպած համազգային աղէտից փրկուած խլեակները կենսապայմաններ ու սիրտանք գտան ազգային ու միջազգային բազում մարդասիրական հաստատութիւնների օգնութեամբ, ինչպէս՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, Գալուստ Կիլիպենկեան Հիմնարկութիւնը, Ամերիկայի Միսիոներական Ընկերութիւնը, Համազգային Մշակութային Ընկերութիւնը, Դպրոցասէր Տիկնանց Վարժարանը, Հայ Օգնութեան Միութիւնը, Վարդան Ծինիշեան Ֆոնտը, Մխիթարեանց Մուրատ-Ռաֆայէլեան Վարժարանը և տասնեակ այլ հիմնադրամներ: Համազգային երախտագիտութեան արժանացած այս կազմակերպութիւնների շարքում իր ուրոյն տեղն ունի Հաւորրտ Գարակէօզեան Յիշատակի Հաստատութիւնը՝ վարչակազօրէն ինքնուրոյն, ազգային, կրօնական և քաղաքական կազմակերպութիւններից անկախ, այլ միայն՝ ազգային միասնականութեան ըմբռնումով, բոլորի հանդէպ գործակցական դիրքորոշումով մի հաստատութիւն, որի հիմնադրման 75-ամեակն է այս տարի:

1921 թուականին Նիւ Եորքում, Միհրան և Զապէլ Գարակէօզեանները ի յաւերժացում իրենց վաղամեռիկ որդու՝ Հաւորրտի յիշատակի, հիմնում են Հաւորրտ Գարակէօզեան Յիշատակի Հաստատութիւնը՝ հայ մանուկների խնամքի և կրթութեան կազմակերպման նպատակով:

Գարակէօզեան Հաստատութեան գործունէութեան առաջին շրջանը սկսում է Պոլսում, ուր 1921 թուականի Օգոստոսին բացում է Հաւորրտ Գարակէօզեան Տունը և իր խնամակալութեան տակ է վերցնում շուրջ 100 դեռատի հայ որբերի: Այն որբանոց էր, բայց կոչում էր Տուն՝ հայ որբուկների ընտանեկան ջերմութիւն ու քաղցրութիւն հաղորդելու միտումով:

Երեք տարի յետոյ, 1924 թուականին, քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով սաները փոխադրում են Ֆրանսիա, ուր նրանց են միանում նաև Յունաստանից բերուած ուրիշ հայ որբեր: Այստեղ որբերի համար ստեղծում են կեցութեան և կրթութեան բաւարար պայմաններ և ընդունելով ֆրանսիական կրթական պետական ծրագիրը, բայց պահպանելով նաև հայերէնի դասաժամերը, հինգ տարուայ ընթացքում կարողանում են կրթութեան որակը բարձրացնել ֆրանսիական պետական պահանջների մակարդակին, որի համար էլ 1929 թուականին ֆրանսիական կառավարութիւնը բարերար Միհրան Գարակէօզեանին պարգևատրում է «Լեժիոն տ'Օնէօր»ի «Շվալիէ» շքանշանով:

1930-ական թուականներին ԱՄՆ-ի տնտեսական ճգնաժամի տարիներին Միհրան Գարակէօզեանը մեծ նիւթական անկումներ կրելով հանդերձ, հաստատութեան ֆիզիքական յատկացումները պակասեցնելով անգամ, կարողանում է պահպանել Գարակէօզեան Տան գոյութիւնը և շարունակել հայ մանուկների կրթական և առողջապահական սրբազան գործունէութիւնը:

Աւելի շատ զբաղուած լինելով իր տնտեսական գործունէութիւնը բարելաւելու խնդիրներով, Միհրան Գարակէօզեանը 1933 թուականին Գարակէօզեան Հաստատութեան Կենտրոնական Վարչութեան նախագահի պարտականութիւնները փոխանցում է իր դստեր՝ օրիորդ

Լէյլա Գարակէօզեանին, որն էլ գլխաւորելով Հաստատութիւնը ո՛չ միայն պահպանում է ծնողների կողմից նախանշուած ուղին, այլև հաւատարիմ մնալով մարդասիրական և բարեսիրական սրբազան նպատակներին՝ աւելի է ընդլայնում թէ՛ ասպարէզը և թէ՛ աշխարհագրութիւնը:

Ֆրանսիայում Հաւորրտ Գարակէօզեան Տունը գործում է մինչև 1936, ուսում տալով և արհեստներ սովորեցնելով շուրջ 200 որբերի:

Այնուհետև Հաստատութիւնն իր գործունէութիւնը փոխադրում է Աթէնք, ուր 1938-ից ծաւալելով լայն գործունէութիւն, Բ. Համաշխարհային Պատերազմի դժուարին տարիներին նեցուկ է կանգնում հայ կարիքաւոր ընտանիքներին՝ ստանձնելով «մանկանց առողջապահութեան և բարեկեցութեան գործը»: Հիմնելով Գարակէօզեան Առողջապահական Կենտրոն և Հայ Առաքելական, Հայ Աւետարանական և Հայ Կաթոլիկ դպրոցների աշակերտների առողջութեան ու կրթական պայմանների բարելաւման ամէնօրեայ աշխատանքին զուգահեռ, ծաւալում է նաև մանկախնամութեան և ընկերային ընդարձակ ծառայութիւն՝ տրախտմայի և մալարիայի համաճարակային պայքար, թոքախտի բուժում, հիւանդապահուհիների տնային այցելութիւններ, կաթի և ձկան իւղի բաշխում, գաղթականների բնակարանների յատկացում, Ամերիկայից բերուած հագուստեղէնի բաշխում, աղքատների կերակրման խոհանոց, ծերերի օգնութեան թոշակ, օդանաւային ուղևորութիւններից աղետալների օգնութիւն և այլն, և այլն: Ժամանակի պահանջներին համապատասխան օգնութեան ձևերը փոփոխութիւն կրելով հանդերձ, Հաստատութեան յունաստանեան գործունէութիւնը շարունակում է մինչև 1995:

1939 թուականից սկսած Հաստատութիւնը, զուգահեռաբար, նոյնատիպ գործունէութիւն է ծաւալել նաև Սիրիայում և Լիբանանում, և հիմնուած Բէյրութի, Այնճարի, Հալէպի, Ղամիշլիի և Քեսաբի Գարակէօզեան մանկախնամ կենտրոններն ու դարմանատները իրենց գործունէութեան 55 տարիների ընթացքում բուժել, կրթել և խնամել են հազարաւոր հայ մանուկների ու պատանիների, և այսօր էլ շարունակում են մնալ պատենէշի վրայ և կատարել իրենց սրբազան առաքելութիւնը:

Ամենայն գնահատանքի և երախտագիտութեան արժանի Գարակէօզեան Հաստատութիւնը, ի հարկէ, չէր կարող չաղթահարել Խորհրդային Միութեան երկաթեայ վարագոյրը և մարդասիրական գործունէութիւնը տարածել Մայր Հայրենիքում:



*The staff of the dental clinic in Nork, Yerevan.*

Աշխարհի չորս ծագերից Հայաստանի աղետեալ ժողովրդին օգնության փութացող հայ և օտար կազմակերպությունների առաջին շարքերում էր Գարակեօզեան Հաստատությունը, որն 1988-1992 թուականների ընթացքում Հայաստան առաքած դեղորայքով, սնունդով, հագուստեղէնով թեթևացնելով մեր ժողովրդի հոգսը, այնուհետև հալատարիմ մնալով մնալուն կառույցներ և շարունակական ծրագրեր իրագործելու իր սկզբունքին, մէկ միլիոն դոլար տրամադրելով, Հայ Բարեգործական Ընդհանուր Միության հետ համատեղ հիմնել է Երևանի վերականգնողական վիրաբուժության բաժանմունքը, որն այսօր էլ շարունակում է առողջապահական առաքելությունը «Էրեբունի» հիւանդանոցում և կեանքի կոչում Հայաստանի բազում քաղաքացիների, Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում խեղուած հայ քաջարի այրերի:

1991-ին Գարակեօզեան Հաստատության Կենտրոնական Վարչության պատուիրակների (Վերապատուելի Ռ. Սարգսեան, Դոկտ. Տարագճեան, Դոկտ. Պանտազեան) և Հայաստանի Առողջապահության Նախարարության (Նախարար Մ. Նազարեթեան) միջև ստորագրուել է առաջին համաձայնագիրը Հայաստանում Գարակեօզեան Հաստատության կենտրոն հիմնելու և մանկական անվճար ատամնաբուժարան բացելու մասին:

1992-ին, այդ նպատակով, նախարարության կողմից յատկացուել է Նորքի «Նարինէ» առողջարանի տնտեսական մասնաշէնքը, որի շին-վերանորոգման աշխատանքները սկսուել են նոյն թուականին, գարակեօզեան Հաստատության միջոցներով:

Նոյն թուականին գրանցուել է «Հայաստանի Հովարդ Կարագյոզյան» հաստատության կանոնադրութիւնը:

1993-ի Ապրիլի 27-ին տեղի է ունեցել Հայաստանի Հ. Գարակեօզեան Կենտրոնի պաշտօնական բացումը, և Մայիսի 3-ից սկսել է գործել մանկական ատամնաբուժական կլինիկան 3 կաբինետներով՝ յագեցած ամերիկեան ժամանակակից սարքաւորումներով, գործիքներով, բուժանիթերով և այլ անհրաժեշտ իրերով:

1993-ի Յուլիսից Կենտրոնում գործում են ձեռագործի և փայտի գեղարուեստական մշակման խմբակներ, ուր յանախում են Նորք թաղամասի 12-15 տարեկան պատանիներ և աղջիկներ, որոնք անցնում են ծրագրաւորուած ուսուցողական դասընթաց և արդիւնքներն ամփոփում հաշուետու ցուցահան-



*The dental clinic of Gumri, Armenia.*

դէսներով: Մինչև այժմ այդ խմբակներն ունեցել են 80 շրջանաւարտներ և այսօր էլ ուսումը շարունակում են 40 երախաներ:

1994-ին Երևանի կլինիկայում բացուել է ատամնաբուժական չորրորդ կաբինետը, որը 1995-ի Յունիսից պրոֆիլաուրուել է որպէս օրթոդենտիկ կաբինետ:

1995-ի Օգոստոսի 1-ից բացուել է Գարակէօզեան Հաստատութեան Գիւմրիի մասնաճիւղը՝ մանկական ատամնաբուժական կլինիկա 4 կաբինետներով:

Ծրագրուած է որ 1996-ի Օգոստոսից գործեն նաև Ստեփանակերտի և Գորիսի մասնաճիւղերը՝ 2-ական ատամնաբուժական կաբինետներով, և Երևանի կլինիկայի հինգերորդ ատամնաբուժական կաբինետը՝ բոլորն էլ դարձեալ կահաւորուած ամերիկեան ժամանակակից սարքաւորումներով և գործիքներով:

Անցած 3 տարիների ընթացքում Երևանի կլինիկայում անվճար արդէն բուժուել են 8500 երախաներ (բացի անհրաժեշտ այցելութիւնների թուից), իսկ 1500-ն էլ հերթագրուած են բուժում ստանալու համար:

Գիւմրիի կլինիկայում անցած 10 ամիսների ընթացքում բուժուել են 2500 երախաներ և 1300-ն էլ՝ հերթագրուած են:

Բուժուած և հերթագրուած բոլոր երախաները ստացել են կանխարգելիչ բուժման լրի կամ մասնակի կուրս և սովորել ատամների խնամքի

## EMERGENCY RELIEF

### • Contribution to the Reconstructive and Plastic Surgery Clinic:

HKCC	\$750,000
Miss Leila Karagheusian	\$250,000

• Program for Winter Relief	\$100,000
-----------------------------	-----------

կանոնները՝ ապահովուելով կլինիկայի կողմից անվճար ատամի խոզանակներով և ֆտորաչին մածուկներով: Իսկ 1993-ին կլինիկայի կողմից ատամի խոզանակներ են տրուել նաև Երևանի մանկապարտէզների և տարրական դասարանների 120,000-ից անէլ աշակերտների:

1993-1996, Ամերիկայի հայ մասնագէտ պրոֆեսորների 6 այցելութիւնների ընթացքում, Երևանի Կենտրոնում իրականացուել է ուսուցողական հսկայական աշխատանք, որ բացի Գարակէօզեան կլինիկաների ատամնաբուժներից, ընդգրկուել են նաև հանրապետութեան և Արցախի տարբեր ստոմատոլոգիական կլինիկաների մի քանի տասնեակ մասնագէտներ և բարձրացրել իրենց մասնագիտական որակաւորումը:

1996-ի Մարտից Երևանի կլինիկան ծառայում է նաև որպէս ուսումնական բազա Երևանի բժշկական ստոմատոլոգիական բաժնի ուսանողների համար: Անցած 4 ամիսների ընթացքում մանկական ատամնաբուժութեան գործնական ուսուցում են անցել ւարտական կուրսի 72 ուսանողներ և 6 ինտերնիստներ:

Գարակէօզեան մայր Կենտրոնի Վարչութեան՝ անձամբ նախագահ Օր. Լէյլա Գարակէօզեանի, Հայաստանի Առողջապահութեան Նախարարութեան և Հայաստանի Գարակէօզեան Հաստատութեան Խորհրդատու Մարմնի անդամների և ողջ աշխատակազմի փոխհամաձայնեցում, ծրագրաւորուած և հետևողական աշխատանքի շնորհիւ, չնայած կարճ ժամանակամիջոցին, Հայաստանի Գարակէօզեան Հաստատութիւնը դարձել է օրինակելի Կենտրոն՝ թէ՛ կազմակերպական, թէ՛ գործնական-բուժական օգնութեան, թէ՛ մարդասիրական օրինակելիութեան, թէ՛ ուսուցողական և թէ՛ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների՝ ժամանակի ոգուն համապատասխան, արդիւնաւետ գործնականութեան առումներով:

Իր գոյութեան 75 տարիների ընթացքում Գարակեօզեան Հաստատութեան Վարչութիւնը մշտապէս հետևել է հիմնադիր Միհրան Գարակեօզեանի պատգամին... Որբանոցի հիմնադրման առիթով ասուած. «Ուսումը գործնական կեանքի պատրաստութեան ծրագիրով» տրուի, նաև «Քրիստոնէական և հայեցի ոգիով» ներշնչուի:

Երախտապարտ ենք արժանաչիշատակ Միհրան, Զապէլ և Հատուրտ գարակեօզեաններին և շնորհակալ՝ Գարակեօզեան Հաստատութեան Կենտրոնական Վարչութեան նախագահ, անանձնական ուրախութեան անշահախնդիր հետևորդ, կեանքի միակ նպատակը Գարակեօզեան Հաստատութեան ծրագրերի իրագործման և մարդասիրութեան մէջ տեսնող, բազմավաստակ ազգային բարերար և բարեսէր Օր. Լէյլա Գարակեօզեանին. Անահիտ և Նուպար Դաւիթեաններին՝ աւելի քան 50 տարի Գարակեօզեան կենտրոնների գործունէութիւնը ղեկավարելու, ծրագրեր կազմելու և իրագործելու, Գարակեօզեան Հաստատութեան պատմութիւնը շարադրելու և ապագայ սերունդներին յանձնելու նուիրական ծառայութեան համար. ինչպէս նաև շնորհակալութիւն Գարակեօզեան Հաստատութեան Կենտրոնական Վարչութեան փոխ-նախագահ Դոկտ. Բերկրուհի Սվանեանին, Դոկտոր Յարութիւն Տորեանին, Էտուարտ Ծանճիկեանին, Մուշեղ Յարութիւնեանին, ընդհանուր տնօրէն Վարդան Պանտազեանին, Վերապատուելի Ռոպերթ Սարգիսեանին, Դոկտոր Պետրոս Տարագնեանին, ատամնաբույժ դոկտորներ Պետրոս Եավրու-Չագուկին, Վարդան Դուկասեանին և բոլոր կենտրոնների բոլոր աշխատակիցներին՝ իրենց անշահախնդիր ներդրման համար:

Աչքի լոյսի պէս պահպանենք ու զարգացնենք ազգային մնայուն արժէքներ դարձած մեր բոլոր բարեգործական հաստատութիւնները՝ ի փառս Ազատ Անկախ Հայաստանի և ի բարօրութիւն հայ ժողովրդի ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

**Կամօ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ**



*The staff of the dental clinic in Gumri, Armenia.*

A BRIEF HISTORY OF THE ACTIVITIES OF THE  
HOWARD KARAGHEUSIAN COMMEMORATIVE CORPORATION  
FROM ITS START IN 1921 TO 1970

CHAPTER 1 - TURKEY  
(1921-1924)

BACKGROUND, ORIGIN AND PURPOSE

During the First World War, 1914-18, the Armenian population of Turkey was ruthlessly deported, by order of the central government, from its ancestral home in Eastern Turkey as well as from other regions of the country where they had long been living. Most of them perished, either through slaughter or privation and disease. Among the survivors were several hundred thousand orphans in a pitiful state. As soon as conditions allowed, Armenian and non-Armenian—mostly American—welfare agencies hastened to physically rescue these homeless children and also ensure their mental and moral development.

At the same time as these children were straying in the wastes of Anatolia and Syria, living on herbs and roots, a fourteen year-old boy, smitten with pneumonia in the Spring of 1918, was breathing his last in a well-to-do home in New York. His father, MIHRAN KARAGHEUSIAN of New York, Rug Manufacturer, and his wife Zabel vowed that their beloved Howard would not have died in vain. By 1921, they had made up their minds; they would start a foundation the purpose of which would be: to perpetuate Howard's memory by striving to save from disease and the consequences of ignorance and indigence deprived children of the Armenian people of which Mihran and



*Howard Karagheusian*

Zabel themselves had been part. They were doubtlessly motivated in their choice of this purpose, as much by the topical emergency mentioned above as by the source of their own bereavement. In the same year, a “Howard Karagheusian Commemorative Corporation” was registered in the State of New York. It was to be managed by a board of directors in New York City, the members of which would consist of Mihran himself and a few kinsmen and friends of his choice.

#### AN ORPHANAGE IN TURKEY

The purpose first took shape as a boys’ orphanage in Constantinople where a large number of the deportation survivors had concentrated. A local committee of four members was appointed by Mihran Karagheusian himself; two of them were his own cousins, the two others were friends in whom he had full confidence. A large enough building with grounds was rented for three years in a beautifully located suburb. Dr. Krikor Tavitian, chairman of the local committee, was also appointed director; he moved with his family to a house adjoining the Home.



*The building of Couzgoundjouk, Istanbul*

In November 1921 the first group of boys, aged six to twelve, were admitted, soon followed by others, reaching a total of near one hundred. They had been selected in accordance with criteria agreed upon.

Mihran wished the institution bearing the name of Howard to be much more than a mere shelter for the homeless. He wanted it to be as nearly as possible a real home where the boys would not only be decently fed and clothed, but would also receive a well-grounded—though elementary—education preparing them to become self-supporting, honest Christian members of their community. Mihran did not favor higher academic studies. He would rather have his boys be trained in manual skills, which could better ensure their livelihood and save them from becoming a burden to their community. He would also lay great stress on the formation of Christian character.



## UNEXPECTED DEVELOPMENTS

Hardly had a year elapsed since the first boys' admission, when political upheavals put into question the very existence of the "Howard Karagheusian Home" in Turkey. The institution was being visited and admired as a model one to which none of the many orphanages in the community could be compared. In the late summer of 1922, the war smoldering in Asia Minor between the Greek army of occupation and the Turkish nationalist army led by Moustafa Kemal flared up abruptly leading to a battle which ended in a rout of the Greek forces. Within a few days, the Turks had reached Smyrna (Izmir) and set the city on fire. The victorious Turkish nationalist Army, in high spirits, were now making their way towards Constantinople.

The Christian population in the city was thereupon seized by panic and started leaving the country in fear of outbursts of Turkish nationalistic and religious fanaticism, which might even lead to massacres as had happened in the not too distant past. There were to be none this time. However, Dr. Tavitian, who was deeply involved in Armenian community affairs and who was in frequent contact with the Allied occupation authorities, was strongly advised by the latter to do likewise. After an exchange of many cables with Mihran in New York and much thought and consultation with his colleagues of the committee, he finally decided to follow the advice. In his absence, the two remaining members, Mihran's cousins Aram and Sarkis Karagheusian, would assume responsibility while the doctor's wife, Aroussiag, who was already involved in the household day-to-day care of the Home, would assume the internal management. She was Mihran's first cousin and very much dedicated to the welfare of the boys.

## IN SEARCH OF A COUNTRY TO SETTLE IN

Daily life continued with little change for a time. But soon, problems arose. There was vexation on the part of Turkish neighbors of the Home. The Turkish internal administration, which had been lax until then, now became very strict in the enforcement of regulations, both existing ones and new ones which were being issued. The Home was required to apply for an operation permit. The committee sought without success to obtain support and protection from the U.S. high commissioner on the plea of Mihran's American citizenship.

Finally, the committee's application to the Turkish authorities met with a blunt refusal and all the boys of the Home had to be dispersed in December 1923. The older ones were apprenticed in manual trades; the others, numbering about seventy-five, were placed temporarily in two boarding schools, pending a decision as to the future of the Home.

During the year 1923, the doctor was studying general conditions in Rumania as well as in neighboring countries in view of an eventual transfer and settlement of the Home, which obviously could no longer remain in Turkey. The outcome was a recommendation to Mihran that the Home be moved to France, where conditions were more stable and favorable than in any of the other countries of the continent, and where Armenian communities were growing through massive immigration.

#### THE MOVE TO FRANCE

Upon Mihran's recommendation, Dr. Tavitian reached Paris in November 1923. Through acquaintances, he was able to apply for and obtain an official permit for the settlement of the Home in France. He also started inquiries about large buildings near Paris available for purchase, but was prevented by ill-health from following up the search. Mihran then decided to come over to France himself in the following summer, with his family, to resume the search and conclude. The doctor died in April 1924. His wife was willing to continue her involvement when the Home would be operating again in France. Her son Noubar, aged 23, was available and likewise willing to work for the new Home. Their engagement by HKCC was finalized by Mihran when he came to France in June 1924. He was accompanied by his wife Zabel and his daughter Leila, aged 22, whom he was eager to see involved in the new project. Both wife and daughter were looking forward, as much as was Mihran, to re-starting the Home in France.



*Zabel Karagheusian*

In mid-July 1924, Mihran and his family, accompanied by an architect advisor and Noubar, drove in a hired car due south west from Paris towards the Loire valley. After half a dozen of buildings had been visited, Mihran chose "La Gaudinière", an imposing château built in 1865 by the Duc de la Rochefoucauld. It measured about 150 x 90 feet, was five stories high, thus providing ample space for the purpose in view; the estate included 200 acres of surrounding forest land and several auxiliary buildings: stables, servants' quarters, a chapel, gate-keeper's lodge. The deal was concluded in August at a very low price. There

would be much expense, however, for altering the inside of the building to suit the requirements of the Home and also for providing facilities which were lacking: a water pumping and distributing system, central heating, and an autonomous electric current generating plant.

Mihran made financial and administrative arrangements with Noubar, who was entrusted with the general management pending the appointment of a director. Noubar and his mother moved to La Gaudinière in September.



*La Gaudinière*